ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> դեկտեմբերի 2013թ. N 104

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թվականի դեկտեմբերի 11-ի N 01/15/6523-12 հանձնարարականի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2014թվականի հունվարի 1-ից մինչև 17-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Ա.Այվազյան/՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Հանձնաժողովին /Ա.Այվազյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2014թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2013 թվականի դեկտեմբերի —ի
N կարգադրության

ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝-
Ա.Այվազյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Անդամներ՝

Վ. Աբրահամյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Մ. Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Թ.Ղազարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Ի.Դավթյան — Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի պետ /համաձայնությամբ/:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ